Ա. ԽԱՌԱՏՅԱՆ. Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը. XV–XVIII դարեր, *Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 471 էջ:*

Հրապարակի վրա է արևմտահայ մշակութային խոշոր կենտրոնի՝ Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախին նվիրված Ա. Խառատյանի մենագրությունը, որ լույս է տեսել Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական մատենաշարով:

Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց մեջ իրենց մենագրական բնույթով առանձնանում են Հ. Ասատուրի, Հ. Պերպերյանի, և Հ. Ճ. Սիրունու աշխատությունները: Արդի պատմագիտության հիմնահարցերի և դրանց հետազոտության տեսակետից գաղթօջախի միջնադարյան պատմությունը (XV–XVII դդ.) սպասում էր իր լուսաբանությանը և Ա. Խառատյանի աշխատությունը գալիս է լրացնելու այդ բացը:

Աշխատության չորս գլուխներում հեղինակը լայն շառավղով ընդգրկել է գաղթօջախի կազմավորման, Կ. Պոլսի պատրիարքության սկզբնավորման ու զարգացման, գաղթօջախի սոցիալ-տնտեսական կյանքի և օսմանյան հասարակության մեջ հայ հանրության տեղի ու նշանակության և սրանց առնչվող հիմնահարցերը: Հեղինակը հանդես է բերել գաղթօջախի պատմության խնդիրները ի նորո գնահատելու, դրանցում նոր ծալքեր բացահայտելու անվիճելի կարողություններ, որով ուսումնասիրությունը ստանում է գիտական լուրջ արժեք և արդիական նշանակություն:

Վերջին տասնամյակներին կուտակված աղբյուրագիտական հարուստ տվյալները Ա. Խառատյանին հնարավորություն են տվել անել բազմաթիվ ճշտումներ, առավել լիարժեք դարձնել կամ հերքել այս կամ այն տեսակետը և առաջ քաշել ու հիմնավորել սեփական մոտեցումները: Հեղինակն առատորեն օգտվել է սկզբնաղբյուրներից, աննախընթաց լայն ծավալներով՝ ձեռագրերի (տպված և անտիպ) հիշատակարաններից, օսմանյան թարգմանական (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով) բազմաթիվ վավերագրերից, մեծաքանակ աշխատություններից, որոնք նրա պատկառելի աշխատանքը դարձնում են բազմաթեմա և, որ կարևորն է, արժանահավատ: Դրա շնորհիվ մենագրության բոլոր գլուխներն աչքի են ընկնում թարմ ու յուրովի առաջադրումներով ու նորույթներով, որպիսիք հարստացնում են Կ. Պոլսի գաղթօջախի մասին մեր պատկերացումները:

Առաջին գլխում այդպիսի նորույթ է դեպի օսմանյան մայրաքաղաք ձգվող հայերի գաղթերի շուրջ 200-ամյա հանգամանալի և նախադեպը չունեցող պատմության վերարտադրությունը: Նույնպիսի տքնաջան աշխատանքի արդյունք է քաղաքի հայ բնակչության թվաքանակի հետ կապվող հիմնահարցի քննարկումը, որի արդյունքում հանրագումարի են բերվել բազմաթիվ, ոչ քիչ դեպքերում իրարամերժ տվյալները: Նշվում է, որ XV դ. վերջին հայերի թիվը գերազանցում էր 50 հազարը, XVI դ. վերջերին՝ 70 հազարը: Այս հարցում երբեք անվերապահ չլինելով, հեղինակն իր հաշվարկներն ամրապնդում է փաստական և դրանցից մակաբերվող տվյալներով, գրեթե միշտ բանավիճելով թուրք հետազոտողների հետ, որոնց, ի դեպ, հատկանշական է ոչ միայն հայերի, այլև առհասարակ քրիստոնյա ազգաբնակչության թվաքանակի միտումնավոր նվազեցումը:

Աշխատության հեղինակը սեփական և հիմնավոր մշակումներն է առաջադրում անգամ այն հիմնահարցերում, որոնք քանիցս հանգամանորեն քննարկվել են գաղթօջախի պատմաբանների կողմից և, թվում է, անհնարին էր այնտեղ նոր խոսք ասելը: Այս կերպ համոզիչ լուծումներ են տրված Ն. Ակինյանի, Մ. Օրմանյանի, Ա. Ալպոյաճյանի, Բ. Կյուլեսերյանի և այլոց կողմից մանրազնին քննարկված՝ Հովակիմի

պատրիարքության և առհասարակ Կ. Պոլսի հայ պատրիարքության սկզբնավորման ու հորջորջման, պատրիարք պատվանունի գործածության խնդիրներին: Հեղինակը յուրովի և հիմնավորապես լուծում է տարակարծությունների տեղիք տված՝ Հովակիմի անձի և նրա վարած հոգևոր պաշտոնների վերաբերյալ կարծիքները, ցույց տալով, որ միևնույն անձն են տարբեր թվացող Հովակիմները՝ ի դեմս Կուտինայի առաջնորդի, Պրուսայի և Կ. Պոլսի առաջնորդի, 1461 թ. Կ. Պոլսի առաջնորդի և 1469 թ. Ֆիլիպեի առաջնորդի:

Կ. Պոլսի հայկական եկեղեցիների տեղագրության և լինելության բազմակնճիռ հիմնահարցի արծարծման դեպքում ևս հեղինակը հանդես է բերել ինքնատիպ մոտեցում՝ համոզիչ փաստարկներով բացահայտելով Ս. Սարգիս, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Նիկողայոս, Ս. Գեորգ, Ս. Հրեշտակապետ եկեղեցիների պատմության ուշագրավ շատ կողմեր: Աշխատության մեջ հիմնավորվում է, որ 1496 թ. մի հիշատակարանում շրջանառող Չարխափան Ս. Աստվածածին եկեղեցին նույնն է, ինչ Կում Կափուի Ս. Աստվածածին եկեղեցին, որը պատրիարքանիստ է դարձել 1641 թ. և այդպիսին էլ մնում է առ այսօր: Եկեղեցիների հանդեպ օսմանյան պետության վերաբերմունքի և դրան հարակից հարցերում Ա. Խառատյանը չի բավարարվում սոսկ իր քննարկած ժամանակաշրջանի սկզբնաղբյուրներով, այլ հենվում է նաև շատ ավելի ուշ ժամանակաշրջանի փաստական նյութի վրա՝ ամբողջացնելով իր տեսակետները:

Նույն մոտեցումն է ցուցադրված նաև Կ. Պոլսի պատրիարքությանը նվիրված գլխում: Այստեղ քննարկված են օսմանյան պետության մեջ միլեթների համակարգի, դրանում հայ պատրիարքության տեղի և նշանակության, վերջինիս հանդեպ օսմանյան քաղաքականության, պատրիարքական իրավասությունների, «ալթը ջեմաաթի»՝ հայ համայնքի, նրա վակֆային ու գույքային-սեփականատիրական գործառնությունների և դրանց առնչվող այլ խնդիրներ: Հեղինակը հետևողականորեն բացահայտում է հայ համայնքի ներքին կազմակերպության ուշագրավ կողմերը, նրա ազգային, սոցիալ-հասարակական բովանդակությունը բնութագրող՝ պատրիարք-վերնախավ փոխհարաբերությունների բնույթն ու զարգացումները: Ցույց է տրվում, որ հայ հանրության կյանքի ընթացքն ուղղորդում էին վերնախավի մարդիկ՝ չելեպիներն ու խոջաները, իսկ XVIII դ. 2-րդ կեսից՝ ամիրաները, որոնք համայնքում ունեին սոցիալական հեղինակություն և նյութական կարողություններ: Արժանին հատուցելով պատրիարքի գործնական ու բարոյական գործառույթներին, հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, որ հիշյալ վերնախավը, այսուհանդերձ, ազգապետ ճանաչված պատրիարքին թելադրում էր իր կամքը, որոշում նրա գործողությունների ընթացքն ու գործելակերպը: Ավելին, իր իսկ՝ պատրիարքի ընտրությունը (իրականում՝ նշանակումը) փաստորեն իրականացնում էին թաղերի երևելիները՝ հենվելով օսմանյան արքունիքի և մեծ վեզիրին ենթակա կառույցների հետ ունեցած կապերի ու հարաբերությունների վրա: Պատրիարքական իշխանությունը բնութագրելիս հեղինակը կանգ է առնում քիչ ուսումնասիրված այնպիսի իրողության վրա, ինչպիսին է աթոռակալության (պատրիարքին փոխարինող՝ աշխարհիկ ու հոգևոր անձանց խմբեր) ինստիտուտը: Նա եզրակացնում է, որ աթոռակալների հայտնությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հայ համայնքի ներքին, սոցիալական կնճիռների բարդացման արդյունք, որ և առաջ էր եկել անընդհատ գաղթականությունների (ջալալիների հուզումների ժամանակից՝ 1600-ական թվականների սկզբներից) ստեղծված սոցիալական հակասությունների սրման, օսմանյան հարկային քաղաքականության պատճառով: Ա. Խառատյանը ցույց է տալիս նաև, որ հենց այդ իրողությունները սնեցին և սրեցին պատրիարքական հանրահայտ կռիվները համայնքի ներսում, ինչպես և այն, որ հոգևոր վերնախավի մարդկանց ընդգրկումն այդ ընդհարումների մեջ՝ պետք է հասցներ պատրիարքական աթոռի համար մղվող չդադարող պայքարի: Այս ներհակությունները դիտարկելով շատ ավելի լայն՝ համազգա-

յին չափերով ու նշանակությամբ, հեղինակն անդրադառնում է Կ. Պոլսի պատրիարքությունը սեփական ազդեցության տակ առնելու հակամետ էջմիածնի և Սսի կաթողիկոսությունների կացությանն ու փոխհարաբերություններին, պատրիարքական աթոռի հանդեպ նրանց մշտական հավակնություններին և այլն: Հեղինակը բացահայտում է ներքին այն կապն ու փոխպայմանավորվածությունը, որ կար Կ. Պոլսի հասարակական տարբեր խմբակցությունների (Թքլթյաններ, Եղիազարյաններ, Հովհաննիսյաններ և այլն) և կրոնական կենտրոնների միջև, և որ հայրենակցական, կրոնական կենտրոնների հանդեպ կողմնորոշումները սոցիալական հակասությունների դրսևորման պահերին ամենևին էլ երկրորդական նշանակություն չունեին: Երևույթի քննարկումն առավել ամբողջական է դառնում, երբ հեղինակը բացահայտում է պատրիարքական բախումներին առնչվող՝ լատինասերների և էջմիածնականների հակադրությունը, սրանց մրցակցությունը պատրիարքական պաշտոնին տիրանալու գործում: Ըստ էության, այս թեման հեղինակը սկսում է 1640-ական թվականներից՝ Կիրակոս Երևանցի պատրիարքի, Կղեմես Գալանոսի և Թովմա Բերիացու ժամանակներից և, շարունակելով աշխատության հետագա հատվածներում, հասցնում է մինչև XVII դ. վերջերը:

1658 թ. Թովմա Բերիացու ողբերգական վախճանը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, Կ. Պոլսի վերնախավի դավանական պահպանողականության հետևանքն էր, որի հիմքում ընկած էին նրա սոցիալական շահախնդրությունները՝ այդ թվում համայնքում աթոռակալների հակահավաքման իրավունքի պաշտպանությունը և Կ. Պոլսի ազգային իշխանությունների գերակայության պահպանումը Երուսաղեմի պատրիարքության նկատմամբ: Խորացնելով այս թեմայի ուսումնասիրությունը՝ հեղինակը նորովի է քննարկում Օսմանյան Թուրքիայում հայոց կաթողիկոսության ստեղծման հայտնի միջադեպերը՝ սկսած Սահակից ու Պողոս վարդապետից և վերջացրած Եղիազար Այնթափցի վարդապետով: Դրանք նա իրավացիորեն գնահատում է իբրև հայ եկեղեցին պառակտելու փորձեր, որոնք բոլորովին էլ ոչ պատահականորեն կապվում էին Օսմանյան Թուրքիայում և հատկապես Արևմտյան Հայաստանում իր ազդեցությունը զորացնելուն ուղղված Հռոմի ջանքերին: Կար նաև բարձրակարգ կղերի այդ ներկայացուցիչների անձնական կեցվածքի ու ձգտումների, անհատականության խնդիրը, որ առավել համոզիչ է դարձնում հեղինակի վերլուծությունն այս կտրվածքով: Նրա գրչի տակ, և սա աշխատության բարձր արժեքը պայմանավորող գործոններից է, ուրվագծվում են աշխարհիկ ու կրոնական գործիչներն իրենց կենդանի նկարագրին և պատմական միջավայրին համապատասխան մտածելակերպով ու վարքագծով: Կարելի է այս իմաստով առանձնացնել Հովհաննես Խուլի, Եղիազար Այնթափցու, Հակոբ կաթողիկոսի, Մարտիրոս Ղրիմեցու, Կրպո պատրիարքի, Թքթքյանների և այլոց նկարագրերը, սրանց գործողությունների համոզիչ հիմնավորումներն աշխատության տարբեր մասերում: Պոլսահայ հասարակական կյանքի վերաբերյալ մեր պատկերացումները հեղինակը հարստացնում է նաև միջավայրը բացահայտող՝ «Կ. Պոլսի երեցները և պատրիարքական իշխանությունը» ենթագլխում: 1670-ական թվականներից մինչև դարավերջ, ինչպես հայտնի է, Կ. Պոլսի երեցները բազմիցս զբաղեցրել են պատրիարքական աթոռը, ինչը վկայում է ոչ միայն մշակութային, այլև հասարակական կյանքում նրանց ակտիվության ու վերնախավերի հետ ունեցած բազմազան կապերի մասին:

Աշխատության 3-րդ գլխում վերլուծվում են արհեստավորական-առևտրական էսնաֆի, Կ. Պոլսի հայ վաճառականության գործունեության և գաղթօջախում նրա ունեցած տեղի, ինչպես և հայ համայնքում կիրառվող հարկային համակարգի հետ առնչվող խնդիրները: Օսմանյան Թուրքիայում հայ արհեստավորական խավերի, նրանց կացության, թուրքական արհեստավորության հետ նրանց առնչությունները ժամանակին հանգամանորեն լուսաբանվել են ինչպես մեր, այնպես էլ Հ. Անասյա-

նի աշխատություններում: Դրանց վրա հենվելով հեղինակն առավել քան ուշադրություն է դարձնում հատկապես Կ. Պոլսի հայ արհեստագործական-առևտրական էսնաֆի կենսագործունեությանը, արտադրությանն ու կորպորատիվ կառուցվածքին, օսմանյան իշխանությունների հետ ունեցած փոխհարաբերություններին, վճարած հարկերին, որ նորույթ պետք է համարել գաղթօջախի պատմության ուսումնասիրության մեջ: Ասենք նաև, որ հեղինակը հմտորեն է օգտագործել այս թեմայով հայկական ու օսմանյան թարգմանական վավերագրերը:

Կ. Պոլսի հայ վաճառականությանը վերաբերող ենթագլխում հեղինակը տարբերակում է տեղաբնիկ և եկվոր վաճառականներին՝ հիմնական ուշադրությունը ուղղելով պոլսաբնակներին: Դա նրան հնարավորություն է տվել բնութագրելու չելեբիների և խոջաների առևտրական գործողությունների ոլորտները, նաև կապերը ներքին գավառների ու հատկապես Արևմտահայաստանի, ինչպես և միջազգային առևտրական կենտրոնների ու քարավանային (պարսկական) առևտրի հետ: Աշխատության մեջ սրանց են առնչվում Թուրքիայի տնտեսության մեջ կատարված տեղաշարժերի, օսմանյան առևտրական քաղաքականության, դրան հատուկ խտրականությունների, արտահանման և ներմուծման անհամամասնության, մոնետարիզմի հանդեպ օսմանների չթուլացող ակնածանքի և այլնի հետ կապվող հիմնահարցերը: Փաստերի հագեցվածությամբ առանձնացող շարադրանքում ուրվագծվում է այն իրողությունը, որ հողի վարձակալական համակարգը (իլթիզամ) պայմանավորեց նաև հարկերի վարձակալությունը, հող նախապատրաստելով հաջորդ՝ XVIII դարի առևտրական կապիտալի շառավիղների ընդարձակման, ինչպես և հայ ամիրայական (առաջին հերթին սեղանավոր ամիրաների) դասի հայտնության համար: Սրա հետ միասին հեղինակը հետազոտել է Կ. Պոլսի հայ համայնքի վճարած հարկերը, դրանց տեսակները և չափերը: Բացահայտվում է հարկերի չափերը մշտապես բարձրացնելուն հակամետ օսմանյան տնտեսական քաղաքականությունը:

Անշուշտ, Կ. Պոլսի հայ հանրությունն ինքնաբավ և մեկուսի միլեթ չէր, այլ նրա կենսագործունեությունն անխուսափելիորեն աղերսվում էր մյուս՝ հույն և հրեա միլեթներին, մահմեդական հանրությանը: Այդ համայնքների, նրանց զբաղմունքի և նկարագրի թող որ համառոտ բնութագրերը հեղինակին հնարավորություն են տվել առավել լիարժեք բացահայտելու պոլսահայ համայնքի դիմագիծը, կարծեք նախապատրաստելով վերջին գլուխը՝ «Կ. Պոլսի հայ հանրությունը և օսմանյան ավանդական հասարակությունը» վերնագրով: Այստեղ քննարկվում են ոչ մահմեդական համայնքների և օսմանյան միջավայրի փոխհարաբերությունները, նրանց առօրեական շփումները, ի հայտ են բերվում օսմանյան իշխանությունների կենցաղային խտրականության ամենատարբեր դրսևորումները, որոնց, ի դեպ, քիչ ուշադրություն է դարձրել խորհրդային պատմագիտությունը: Գրեթե չուսումնասիրված թեմա է նաև գերության համակարգի հետազոտությունը՝ իբրև օսմանյան միջավայրին հատկանշական երևույթ: Հեղինակն անդրադառնում է գերեվարությունների հետ Կ. Պոլսի հայության աղերսներին, լայն կտրվածքով՝ մանկահավաքներին և ենիչերական օջախին: Նա նոր կողմերով է հաստատում ժամանակին մեր հայտնած այն տեսակետը, որ մանկահավաքներն ավանդական միջոց էին՝ թուլացնելու ոչ մահմեդական ազգաբնակչության ֆիզիկական ու մտավոր ներուժը և ընդլայնելու օսմանյան ռազմաբյուրոկրատական ու իմացական հնարավորությունները:

Աշխատության վերջին ենթագլխում հետազոտվում են հայ-հունական եկեղեցական հարաբերությունները Կ. Պոլսում և նրա սահմաններից դուրս: Այստեղ հարկ է արժեքավորել այն, որ հեղինակը չի ընթացել գաղթօջախի պատմաբանների բացած վաղեմի ուղիով՝ ներկայացնելով նշված հարաբերությունների միայն դավանական, հակամարտ կողմերը: Ընդհակառակը, հեղինակը ցուցադրում է հայ-հունական առնչությունների բարեկամական դրսևո-

րումները ևս՝ այն հիմնարար եզրակացությամբ, որ օսմանյան տիրողների կողմից հայերի և հույների տնտեսական ու կրոնական ճնշումները և իրավազրկության միևնույն պայմաններն այն մշտական հենքն էին, որ մերձեցման էին մղում այս երկու համայնքներին՝ նրանց տրամադրելով նաև դավանական լայնախոհության:

Աշխատությունը, կարծում ենք, զերծ չէ որոշ թերություններից կամ վիճահարույց կողմերից: Նախ, փաստական մեծածավալ նյութը շրջանառության մեջ է դրվել շատ սեղմ «տարածքում», որոշ հատվածներ կարելի էր շարադրել ավելի հանգամանալի, որն առավել պարզություն կմտցներ հետազոտվող հիմնահարցի մեջ: Սրա հետ կապված՝ բազմաբովանդակ կդառնար XVII դ. վերջին տասնամյակների համայնքի պատմությունը, մինչդեռ հեղինակը հիմնականում ամփոփվել է պատրիարքական կռիվների շրջանակներում: Կան ոչ հստակ ձևակերպումներ, որ նկատելի է խոջաների և չելեբիների գործունեության տնտեսական վերլուծությանը վերաբերող հատվածում:

Նշվածը, սակայն, մասնավոր նշանակություն ունի և ամենևին չի ստվերում աշխատության գիտական բարձր արժեքը: Ա. Խառատյանը կատարել է տասնամյակների ջանքեր պահանջող պատկառելի և լուրջ աշխատանք, որ նշանակալիորեն ընդլայնում է միջնադարի Կ. Պոլսի հայ գաղթօջախի պատմագրության սահմանները: Աշխատությունը գրված է ուրույն լեզվամտածողությամբ, որ ներդաշնակում է ուսումնասիրության առարկայի դիմագծի վերհանմանը: Օգտագործված հարուստ գրականությունը, բազմաբովանդակ ծանոթագրությունները և մատենագիտական ցանկերը վկայում են, որ հեղինակը լավագույնս տիրապետում է նյութին, որի շնորհիվ ստեղծել է գիտական մի աշխատություն, որը երևույթ է հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության ասպարեզում:

ՄԱՆՎԵԼ ԶՈՒԼԱԼՅԱՆ